ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի ապրիլի 7-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովը, որ անցկացվեց ակադեմիայի նիստերի դահլիճում։ Ժողովի աշխատանքներին մասնակցում էին ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ, թղթակից-անդամներ, գիտա-հետազոտական հիմնարկների ղեկավարներ, ճյուղային ինստիտուտների և արտադրական ձեռնարկությունների ներկայացուցիչներ։ Գիտնականների համաժողովին ներկա էին Հայաստանի կոմպարտիայի կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Յա. Ն. Զարոբյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Ն. Խ. Հարությունյանը, Հայաստանի կոմպարտիայի կենտկոմի երկրորդ քարտուղար ընկ. Հ. Մ. Բաղդասարյանը, ՀՍՍՌ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ ընկ. Լ. Ա. Ստեփանյանը և ուրիշներ։ Տարեկան ժողովը քննարկեց երկու հարց.

1. Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի 1963 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները (զեկ. ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Ս. Ս. Մկրտչյան)։

2. ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան և փետրվարյան պլենումների որոշումները և ակադեմիայի խնդիրները քիմիական գիտության բնագավառում (զեկ. քիմիական գիտ. բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ա. Լ. Մնջոյան)։

Ժողովն ընդարձակ ներածական ճառով բացեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ընդգծեց կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների կարևոր նշանակությունը սովետական գիտության վերակառուցման ուղղությամբ։ Անցյալ տարի մերակառուցվեց նաև Հայաստանի գիտական հիմնարկների ցանցը, ակադեմիայի սիստեմից այլ գերատեսչությունների հանձնվեց տեխնիկական և բժշկական պրոֆիլի 8 խոշոր գիտա-հետազոտական հիմնարկություն, որը հնարավորություն տվեց գիտական ուժերն ու նյութա-տեխնիկական միջոցները կենտրոնացնել բնական և հումանիտար գիտությունների կարևորագույն պրոբլեմների լուծման վրա։

Ընդգծելով, որ Հայաստանի գիտությունների ակադեմիան չպետք է զբաղվի առհասարակ բոլոր գիտական խնդիրներով, այլ պետք է անցկացնի և իրականացնի գիտական հիմնարկների մասնագիտացումը և վերակառուցումը, Վ. Հ. Համբարձումյանը նշեց, որ ռեսպուբլիկայի ակադեմիան պետք է ունենա իր դեմքը, նա ոչ թե պետք է կրկնի և ներկայացնի համամիութենական ակադեմիայի փոքրացրած ձևը, այլ ունենա իր ուղղությունը, իր ուրույն ճանապարհներով զարգացնի գիտությունը, ըստ որում այն պետք է զուգակցվի ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի զարգացման շահերին։ Նա միաժամանակ խնդիր դրեց ուժեղացնել կապը միութենական ակադեմիայի և ռեսպուբլիկաների ակադեմիաների միջև։

Մենք ունենք հսկայական հնարավորություններ ռեսպուբլիկայում քիմիան մի քանի օրիգինալ ուղղություններով զարգացնելու համար։ Ակադեմիայի կազմում քիմիական գիտությունների բաժանմունք ստեղծելը հնարավորություն կտա ավելի օպերատիվ ղեկավարել քիմիական գիտության զարգացումը և ավելի մոտիկից իրականացնել այդ բնագավառում ակադեմիայի հիմնարկներում, բուհերի լաբորատորիաներում և ճյուղային ինստիտուտներում տարվող արժեքավոր աշխատանքների կոորդինացումը։

Ակադեմիայի գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Ս. Ս. Մկրտչյանը։ Նա հանգամանորեն կանգ առավ ակադեմիայի ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական, քիմիական, կենսաբանական, հասարակական գիտությունների, երկրի մասին գիտության բաժանմունքների կազմի մեջ մտնող 25 գիտա-հետազոտական հիմնարկների ձեռք բերած ամենաէական գիտական արդյունքների վրա, արդյունքներ, որոնք ստացվել են 82 պրոբլեմների գծով։

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի կազմի մեջ մտնող հիմնարկներում ստացված են նոր նշանակալից արդյունքներ աստրոֆիզիկայի, մաթեմատիկայի, կիբերնետիկայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, հաշվողական մաթեմատիկայի, կարծր մարմնի ֆիզիկայի բնագավառներում։

Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի ֆունկցիաների տեսության սեկտորում լուծված է տված փակ բազմության վրա անընդհատ և

ներին կետերում անալիտիկ ֆունկցիաներին ամբողջ ֆունկցիաներով մոտարկելու պրոբլեմը։ Դիֆերենցիալ հավասարումների սեկտորում ո-րոշ տիպի ինտեգրալ հավասարումների համար գտնված է կորիզների մի յայն դաս, որը պա-րունակում է իր մեջ վոլտերայի կորիզները որպես մասնավոր դեպք։ Մեխանիկայի սեկտո-րում լուծված են անիզոտրոպ ոչ համասեռ թա-ղանթների և սալերի ստատիկ ու դինամիկ կա-յունության գծային և ոչ գծային խնդիրները։

Բյուրականի աստղադիտարանում հատուկ ու-շադրություն է նվիրվել արտաքին գալակտիկա-ների պրոբլեմին։ Արտաքին գալակտիկաների միջուկների և նրանց ֆիզիկական սիստեմների անկայունության վերաբերյալ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի կողմից Բյուրականում մշակված պատկերացումներն օգնեցին հասկա-նալու մի շարք մինչ այդ անբացատրելի երե-վույթներ։

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստի-տուտում ռադիոաստղագիտության բնագավա-ռում կատարվել են աշխատանքներ գալակտիկ միգամածություններում շեզոք ջրածնի առկա-յության, աստղասփյուռների առաջացման և պղտոր միջավայրերի միջով անցման ժամանակ էլեկտրամագնիսական ճառագայթման ցրման ուսումնասիրության ուղղությամբ։

Հաշվողական կենտրոնում առաջին փորձնա-կան հետաքրքիր արդյունքներն են ստացվել հայերենից ռուսերեն մաթեմատիկական տեքստի թարգմանության ուղղությամբ։ Ակտեղ Տրան-սլյացիայի ինստիտուտի հետ համատեղ աշխատանք է կատարվել՝ մաթեմատիկական մեթոդների և հաշվողական տեխնիկայի տեսա-գիտության և պլանավորման մեջ կիրառման ուղղությամբ։

Կենտրոնական գիտա-հետազոտական ֆիզի-կա-տեխնիկական լաբորատորիայում տեսական աշխատանքներ են կատարվել մեծ խտություն-ների և ջերմաստիճանների առկայությամբ նյու-թի հատկությունների ուսումնասիրության ուղ-ղությամբ։

Տեխնիկական գիտությունների բնագավառում՝ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը ընդհանրացրել է ռնսպուբլիկայի տերիտորիայի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրու-թյան նվիրված նոր հարուստ փաստական նյութ և կազմել է ստրուկտուրա-երկրաբանական քար-տեզ, որը հիմք է ծառայելու մետաղական և կանխորոշային քարտեզների համար։

Հաջողությամբ է կատարել ուսումնասիրու-թյունները գեոֆիզիկայի և ինժեներային սեյս-մոլոգիայի ինստիտուտը։ Ինժեներային սեյս-մոլոգիայի բնագավառում կատարվել են կոմպ-լեքս աշխատանքներ, նվիրված երկրաշարժերի և պայթումների սեյսմիկ ներգործության կա-ռուցվածքների և նրանց հիմքերի վրա, ուսում-նասիրվել են նրանց դինամիկ բնույթը, սեյս-միկ ներգործության պայմաններում կառուց-վածքի և նրանց հիմքի միջև եղած փոխներ-գործության հարցը, սեյսմոպայթումային ներ-գործություններ իոշորարլոկ շենքի մոդելի վրա և այլ հարցեր։

Օրգանական քիմիայի ինստիտուտը շարու-նակել է իր հետազոտությունները երեք ուղ-ղություններով՝ օրգանական սինթեզի, թունա-նյութերի սինթեզի և քիմիական տեխնոլոգիայի պրոցեսների ու ապարատների ուսումնասիրու-թյան ասպարեզում։ Հաջողություններ են ձեռք բերվել ամինո և ացետիլենային միացություն-ների բնագավառում նոր օրինաչափությունների հայտնաբերման, ինչպես նաև եղած օրինաչա-փությունների զարգացման ուղղությամբ։

Նույնը օրգանական քիմիայի ինստիտուտը կատարել է հետաքրքիր հետազոտություններ մի շարք բիոլոգիական ակտիվ նյութերի սինթեզ-ման գծով։ Նրանց շարքում կան արժեքավոր պրեպարատներ սիրտ-անոթային, անտիբակտե-րիալ, նեյրոհոգեբանական և մի շարք ուրիշ միացումներ կուրարենման հատկանիշներով։ Ստացված են նաև պրեպարատներ, որոնք անց-նում են կլինիկական հետազոտություններ. մի-բլդրոլ, խիգինդամոն, ֆուրազոլ, նալեցին, ցի-պենամ։

Բիոորգանիկայի ինստիտուտը շարունակել է իր հետազոտությունները «Ուղեղի ֆունկցիոնալ բիոորգանիկա» և «Սպիտակուցի կենսաբանական ֆունկցիան ու բջջի կառուցվածքը» պրոբլեմների գծով։ Ուղեղի ֆունկցիոնալ բիոորգանիկայի վերա-բերյալ ստացված են նոր տվյալներ գամմա-ամինակարդաթթվի, ացետիլ-ասպարագինա-թթվի, ինչպես նաև հիպոթալամուս-նեյրոհիպո-ֆիզոտ սիստեմայից նոր պոլիպեպտիդային բնույթ ունեցող կենսաբանական ակտիվ նյութերի ան-յատման և նյութափոխանակության վերաբեր-յալ։

Հեկուցման մեջ նշվեցին կենսաբանական գի-տությունների բաժանմունքների հիմնարկների ձեռք բերված հաջողությունները, որոնք ընթացել են ՍՍԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետ 1963 թ. հունվարի 9-ի՝ «Կենսաբանական գիտությունների հետագա զարգացման և պրակ-տիկայի հետ նրա կապի ամրապնդման միջո-ցառումների մասին» որոշման կենսագործման լույսի տակ։ Ակադեմիկոս Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի, բուսաբանական, կենդանաբա-նական, միկրոբիոլոգիայի ինստիտուտներում, Սևանի հիդրոբիոլոգիական կայանում մեծ աշ-խատանք է կատարված թեմատիկան կյանքին մոտեցնելու, այն ավելի նպատակասլաց դարձ-

նելու և նորագույն մեթոդներ կիրառելու ուղղությամբ։ Ագրոբիմիայի լաբորատորիայում մշակվել է բաց արդյունաբերական հիդրոպոնիկայի եղանակը իր նոր տեխնոլոգիայով, որը սովորական ագրոտեխնիկա չէ, այլ ագրոտեխնիկայի, ֆիզիոլոգիայի, բիոքիմիայի, բիոֆիզիկայի և ավտոմատացման համատեղ կիրառում։ Լաբորատորիան միաժամանակ ձեռնարկել է փակ տարածությունում անընդմեջ կերպով կանաչ կեր արտադրելու եղանակը, որը խիստ կարևոր նշանակություն ունի, օրինակ, թռչնաբուծության համար։

Զեկուցման մեջ դգալի տեղ էր հատկացված հասարակական գիտությունների բաժանմունքում մեջ մտնող հիմնարկների աշխատանքների լուսաբանմանը։

Հաշվետու 1963 թ., ինչպես և առաջներում, առաջ ակադեմիկոս բարտուղար Ս. Ս. Մկրտչյանը, ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ջանքերը նվիրված են եղել հայ ժողովրդի պատմության, հայ գրականության և հայոց լեզվի պրոբլեմների, արևելագիտության, փիլիսոփայության և իրավունքի հարցերի ուսումնասիրության ու լուսաբանմանը։

Հաշվետու տարում բաժանմունքի հիմնարկներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել արդիական պրոբլեմների մշակման հարցի վրա, ընդհանրացնող կոլեկտիվ աշխատությունների ստեղծման վրա։ Այս ուղղությամբ ձեռք են բերված որոշակի հաջողություններ։

Այսպես, գրականության ինստիտուտը հրատարակման է պատրաստել «Հայ նոր գրականության պատմության» 4-րդ հատորը և «Սովետահայ գրականության պատմության» 2-րդ հատորը։ Պատմության ինստիտուտում աշխատանք է ծավալվել «Հայ ժողովրդի պատմության» բառահատոր աշխատության պատրաստման ուղղությամբ։ Այս կապիտալ աշխատությունը, որը ընդգրկելու է հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, նախատեսված է հրատարակել 1965—1967 թթ. ընթացքում։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հաշվետու տարում շարունակել է Դարտիի, Կարմիր-բլուրի, Դվինի, Շենգավիթի, Արին-բերդի և այլ օբյեկտների հնագիտական պեղումները, որոնք նշանավորեցին մի շարք հնագիտական հայտնագործություններով (նորահայտ արձանագրություններ, արձան, կերամիկա, զենք և այլն)։ Հնդլայնվեց Արմավիրի պեղումների ծավալը։ Այս հնագիտական հուշարձանի ուսումնասիրությունը խոշոր նշանակություն ունի հին Հայաստանի նյութական մշակույթի և քաղաքային կյանքի հետազոտման համար։ Ինստիտուտը ձեռնամուխ է եղել «Հայաստանի հնագիտական ատլաս» և «Հայաստանի առգագրական ատլաս» կոլեկտիվ կապիտալ աշխատությունների մշակմանը։

Լեզվի ինստիտուտում ավարտվել է «Հայոց լեզվի համանիշների բառարան» կապիտալ աշխատության ստեղծումը։ Բացի այդ աշխատանքներ են ծավալվել բառահատոր «Հայոց լեզվի բացատրական բառարան» կազմելու ուղղությամբ։

Որպես գրական երևույթ նշվեց այն հանգամանքը, որ զգալիորեն ամրապնդվել է հասարակագիտական հիմնարկների կապը Միության առաջատար ինստիտուտների, իսկպես նաև Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների համապատասխան ինստիտուտների հետ։ Այսպես, պատմության ինստիտուտի մի խումբ աշխատակիցների մասնակցությամբ, ավարտվել է «Սովետական իշխանության հաղթական Անդրկովկասում» կոլեկտիվ աշխատությունը, որը հրատարակվելու է Մոսկվայում։ Գրականության ինստիտուտի աշխատակիցները մասնակցում են «ՍՍՌՄ ժողովուրդների գրականության պատմության ուրվագծերի» աշխատության ստեղծմանը։ Նշված բազմահատոր աշխատությունը նախապատրաստվում է ՍՍՌՄ ԳԱ համաշխարհային գրականության ինստիտուտի կողմից։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցները Ադրբեջանի և Վրաստանի համապատասխան ինստիտուտների կոլեկտիվների հետ համատեղ ձեռնամուխ են եղել Անդրկովկասի հնագիտական և ազգագրական ատլասներ կազմելու աշխատանքներին։ Արևելագիտության սեկտորը մասնակցում է Մոսկվայում նախապատրաստվող «Թուրքիայի նորագույն պատմության ուրվագծերի» մշակման գործին։

Հարկ է նշել, ասում է զեկուցողը, որ վերջին տարիներին նկատելի է դարձել հասարակական գիտությունների հիմնարկների շրջադարձը դեպի ժամանակակից, արդիական հարցերի ուսումնասիրությունը։ Պատմության ինստիտուտում մշակվել են մի շարք թեմաներ «Սովետական Հայաստանը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում» պրոբլեմի գծով։ Փիլիսոփայության և իրավունքի սեկտորը մշակում է «Կոմունիզմ և աշխատանք» պրոբլեմը, ինչպես նաև ժամանակակից բնագիտության փիլիսոփայության հարցերը։ Արևելագիտության սեկտորի աշխատանքի կենտրոնումն է «Ազգային ազատագրական շարժումը ժամանակակից էտապում» պրոբլեմը։

Տնտեսագիտության ինստիտուտում աշխատանքներ ծավալվեցին «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության հաշվեկշիռը», «ՀՍՍՌ ժողովրդական տնտեսության արտադրողական

ուժերի զարգացման ու տեղաբաշխումը», «Սոցիալիզմից կոմունիզմին անցման օրինաչափությունները» պրոբլեմների գծով։ Հաշվետու տարում ինստիտուտում առաջին անգամ կազմվեց ՀԽՍՌ աշխատանքային ռեսուրսների հաշվեկշռի նախնական օրինակը։ Մշակված է բնակչության եկամուտների և սպառման հաշվետու ու պլանային հաշվեկշռի նոր սխեմա։ Այդ սխեման ապահովում է դիֆերենցված մոտեցումը բնակչության իրական մակարդակը բնութագրող փոխադարձաբար կապված ցուցանիշների վերլուծմանն ու պլանավորմանը։

1963 թ. Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում ավարտվել է 69 գիտա-հետազոտական թեմաների մշակումը։ Հրատարակվել են ավելի քան 50 անուն գիտական աշխատություններ։

Զեկուցման մեջ մեծ տեղ էր հատկացված նաև գիտա-կազմակերպչական բնույթի հարցերին. Միջազգային գիտական կապերին, գիտա-հետազոտական հիմնարկների վերակառուցմանը, նախագահության բաժանմունքների բյուրոների և գիտա-հետազոտական հիմնարկների աշխատանքում տեղ գտած էական թերություններին։

Որպես զգալի թերություն նշվեց այն, որ մեր գիտա-հետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների աշխատողների մի մասի մոտ ցածր է արտադրողականությունը, նրանց աշխատանքները երբեմն ոչ բարձր մակարդակով են կատարվում։ Մյուս լուրջ թերությունը կայանում է ուժերի ցրումը բազմաթիվ թեմաների կատարման վրա, թեմաներ, որոնք երբեմն չունեն խոշոր տեսական կամ կիրառական նշանակություն։ Չնայած գիտական հիմնարկների թեմատիկ պլանների կազմման գործում կան լուրջ բարելավումներ, բայց և այնպես առկա է թեմաների որոշ տոկոս, որի առաջքաշումը ավելի շատ կախված է այս կամ այն աշխատողի անձնական և ոչ թե գործի շահերից։ Դեռևս նկատելի է մանրաթեմայնություն, գիտական ուժերի ցրումը, մեծ դժվարությամբ է կիրառվում կոլեկտիվ աշխատանքի պրակտիկան։ Որպես էական թերություն նվազեց նաև այն, որ բաժանմունքները և նախագահությունը քիչ ուշադրություն են դարձնում ավարտված աշխատանքները արտադրության մեջ ներդնելու հարցերին, անբավարար չափով են հետևում ինստիտուտների փորձարդյունաբերական ստուգման և ներդրման պլանների կատարմանը, չեն ուժեղացնում պահանջոտությունը այդ բնագավառում, բաժանմունքները և հիմնարկները կարևոր պրոբլեմների վերաբերյալ քիչ են բանավեճեր անցկացնում։

ԳԱ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանը «ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան և փետրվարյան պլենումների որոշումները և ակադեմիայի խնդիրները քիմիական գիտությունների բնագավառում» զեկուցման մեջ հանգամանորեն խոսեց այն լայն հեռանկարների մասին, որոնք բացվում են ռեսպուբլիկայում քիմիական արդյունաբերության զարգացման բնագավառում և առաջարկեց ռեսպուբլիկայում ստեղծել գիտահետազոտական խոշոր կոմպլեքսներ, որոնք հնարավորություն կունենան ուսումնասիրել քիմիայի այս կամ այն բնագավառը ամբողջությամբ վերցրած, հարակից գիտությունները հետ սերտորեն կապված։

Զեկուցումների շուրջը բնդհանուր ժողովում ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն։ Հանդես եկան ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Բ. Կարինյանը, Գ. Հ. Բարաջանյանը, Ի. Վ. Սպիտակովը, Մ. Գ. Ներսիսյանը, Վ. Հ. Գուրբանյանը, ՀՍՍՌ Մինիստրների սովետի գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի նախագահ Բ. Ե. Սարկիսովը։

«Բարձրացնել գիտական հետազոտությունների մակարդակը, արտադրության մեջ ավելի արագորեն ներդնել գիտության նվաճումները» բնդարձակ ճառով ակադեմիայի բնդհանուր ժողովում հանդես եկավ Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զարոբյանը։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի բնդհանուր ժողովում, ակադեմիայի պրեզիդենտի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ, անցկացվեցին պրեզիդենտի ընտրություններ։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ (փակ գաղտնի քվեարկությամբ) միաձայն ընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

* * *

Ապրիլի 4—6-ը տեղի ունեցան ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի գիտությունների բաժանմունքների ժողովներ, որոնք քննարկեցին բաժանմունքների հիմնարկների 1963 թ. գիտական գործունեության արդյունքները։

Զեկուցումներով հանդես եկան ԳԱ ակադեմիկոսներ Մ. Մ. Ջրբաշյանը (ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների բաժանմունք), Ա. Լ. Մնջոյանը (քիմիական գիտությունների բաժանմունք), Մ. Գ. Ներսիսյանը (հասարակական գիտությունների բաժանմունք), Հ. Գ. Մաղաքյանը (երկրի մասին գիտության բաժանմունք), Վ. Հ. Գուլբանյանը (կենսաբանական գիտությունների բաժանմունք)։ Խոսեցին նաև գիտական զեկուցումներ։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ